ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 10-ԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

(Մտեփանակերտ, 2 սեպտեմբերի 2001 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո Նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,

Սիրելի ներկաներ.

Տոն է այսօր ազատ Արցախի հայոց փոքրիկ հողակտորի վրա. տոն է համայն հայոց հոգիներում՝ ի Հայաստան և ի Սփյուռս, քանզի դասանամյակ առաջ այս օրը հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Արցախի Անկախության 10-րդ տարեդարձի առիթով հոգու անսահման բերկրանքով ողջունում և շնորհավորում ենք մեր ժողովրդի բոլոր զավակներին և մասնավորաբար՝ Արցախի հաղթանակած մեր ժողովրդին՝ Մեր սերը և Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերելով Ձեզ:

Հպարտ ենք համայն մեր ժողովրդով, որ արդարության հաղթանակի հավատը հոգում 1988-ի վճռորոշ օրերին արձագանքեց հերոսական Արցախի ազատության սուրբ կանչին և միասիրտ ու միաբան զինվորագրվեց ազատագրմանը հայոց հինավուրց այն հողակտորի, ուր միշտ արթուն է եղել հայրենյաց սերը և հանուն անկախության պայքարի ոգին: Արդարև, բազում թշնամյաց ուժն է կոտրվել՝ բախվելով Արցախի երկնահայաց լեռներին: Բազում արցախահայոց պանծալի անուններով է հյուսվել մեր Հայրենիքի պաշտպանության փառապսակը: Արցախյան ազատագրական պայքարը փորձաքար եղավ նաև խորհրդային տերության համար՝ բացահայտելով, որ անհույս է բռնապետության և անաստվածության ուղին: Կեղծ արժեքներ փշրեց ու կուռքեր տապալեց Արցախի արդար պայքարը, և հաղթանակեց արցախցու հավատավոր հոգին, որով իր լեռներին եկեղեցի, վանք ու խաչքար է կանգնեցրել, ստեղծել բարիք ու շեն պահել իր տունը և միշտ հավատարիմ մնացել նախնյաց սրբություններին ու ավանդներին: Աստծո օգնությամբ հաղթանակեց մեր ժողովրդի միասնականությունը՝ ինքը զորանալով Արցախով:

Այսօր մենք խոնարհումով ու աղոթքով ենք հիշում հայրենյաց պաշտպան բոլոր քաջորդիներին, ովքեր Վարդանանց օրինակով ապրեցին «հոգին առավել է, քան մարմինը» գիտակցությամբ ու հավատով և իրենց կյանքը նվիրեցին, որպեսզի օր առաջ ծնունդ առնի Արցախի անկախությունը: Սրբոց Վարդանանց շարքում են նրանք, և նրանց հոգիներն այսօր երկնքից նայում են մեզ ու ցնծում մեզ հետ:

Սիրելիներ, Բարձրյալի նախախնամական տնօրինությամբ Արցախի և Հայաստանի Անկախության դասանամյակը տոնախմբում ենք հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդի ներքո: Հոգենորոգ այդ խորհրդով հուսավառ՝ ազատության երկնապարգև իր իրավունքը պաշտպանած հայությունն այսօր լավատեսությամբ ու

վստահությամբ է նայում գալիքին: Առ Աստված ապավինությամբ մենք հավատում ենք ազգային մեր իղձերի իրականացմանը, Հայաստան, Արցախ և Սփյուռք միաբանության արարող ուժին: Եվ թող Տերը աննկուն պահի սիրո և միասնության 88-յան ոգին հայոց մեջ, որով կերտվել է Արցախի անկախությունը, որը երաշխիքն է մեր հաղթանակների:

Մեր աղոթքն է նաև, որ Բարձրյալն Աստված Սուրբ Խաչի օրհնության ներքո անառիկ ու խաղաղ պահի հայոց Արցախ աշխարհը, կենդանարար հավատով զորացնի և դեպի ստեղծարար կյանքի նվաճումներ առաջնորդի կորովի ու հերոսական արցախահայոց:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»: